ՆՈՐ-ԴԱՐ

№ 137 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 1 Սեպտեմբերի **1901** Շաբաթ, 1 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 137

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., համարը 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 3 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.— Քաղաքական աշխարհից։
Քրոնիկոն.— Լուրեր։
Մեզ գրում են.— Բագուից։ Չխարից։ Սեւլից։ Ղզլարից։
Էլ չավն ոչյա։
Թղթակցութիւններ.— Նամակ Մանջուրիայից, Ա Ժէ-Խէ։
Պայմաններ Հաննոսի հովտում։
Քաղաքական.— Թիւրքիա։ Հարաւային Աֆրիկա։
Հեռագրական լուրեր։
Բանասիրական.— Վարդապետ։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս 31 օգոստոսի 1901 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

—

Բոէրները շարունակում են իրենց ազատութեան հերոսական կռիւն անգլիացիների դէմ, և այդ կռուի վերջը դեռ չէ երեւում։ Թէպէտ Անգլիան ահա երկու տարի է, որ իւր ամբողջ ոյժերը լարել է Հարաւային Աֆրիկայի երկու փոքրիկ հասարակապետութիւնները ոչնչացնելու համար, բայց դեռ չէ հասել իւր նպատակին։

Միացեալ - Նահանգների նախագահ Մակ - Կինլէյին վիրաւորեց չարագործի գնդակը, բայց բարեբաղդաբար, բժիշկների ասելով, հիւանդը մեռնելու վտանգից ազատուած է, և յոյս կայ, որ մի ամսից բոլորովին առողջանայ։

Որքան յայտնի է, Մակ-Կինլէյը Միացեալ Նահանգների երկրորդ նախագահն է, որ չարագործի գաղտագողի հարուածին է ենթարկւում։ Լինկոլն առաջին նախագահն էր, որ չարագործի գնդակից մեռաւ։

Անիշխանականների ձեռքից մեռաւ Ֆրանսիական հասարակապետութեան նախագահ Կարնոն, մեռաւ Աւստրիայի Եղիզաբէթ կայսրուհին, որ մի պատուական կին էր և հեռու քաղաքական աշխարհից ու պալատական ինտրիգներից՝ կեանք էր վարում. ընկաւ անիշխանականի հարուածից Իտալիայի Հումբերտո թագաւորը, և այժմ նոյն անիշխանականի հարուածի զոհ է դարձել աշխարհիս ամենամեծ հանրապետութեան նախագահ Մակ-Կինլէյը։

Անիշխանականներին հալածելու համար առանձին եռանդ երբեք չէ ցոյց տուել Միացեալ Նահանգները. ազատութեան սկզբունքները բարձր պահելով, այժմս, երբ հարուածն իրեն հասաւ, կըմտածէ մի փոքր այդ անիշխանականները, այդ նոր տեսակի գազանները զսպելու միջոցների մասին։

Ինչպէս երեւում է, անիշխանականները մի նպատակ ունին, այն է՝ սպանել առանց մի որեւէ պատճառի։

Այդ տեսակ չարագործներն ամեն տեսակ սովորական չարագործներից աւելի վտանգաւոր են։ Դրանց չի կարելի դատաստանի և քննութեան ենթարկել և աւելորդ էլ է։ Պէտք է դրանց կոտորել, ինչպէս վնասակար գազաններին կոտորում են. ահա որտեղ է, ուր պէտք է գործ դնել հնացած, վայրենի ժամանակներից ընդունուած «ակն ընդ ական»-ի սկզբունքը։

Ընդհանրապէս առած՝ Եւրոպան խաղաղութեան մէջ է։ Չինական խնդիրն առ ժամանակ լուծուած պէտք է համարել. եւրոպական պետութիւնների և չինացիների միջև հաշտութեան պայմաններն ստորագրուած են, յաւիտեան խաղաղութիւնը պահպանելու խոստումով։

Դանցիգի և Դիւնկիրխէնի տեսակցութիւններն ապահովացնում են եւրոպական խաղաղութիւնը, որով և պատերազմի վտանգը յետաձգւում է անորոշ ապագային։

Երբ Ռուսիան և Գերմանիան միմեանց հետ հաշտուեն, էլ ոչ մի ուրիշ պետութիւն չի կարող և չի էլ կարենալ խանգարել ընդհանուր խաղաղութիւնը, որը պահպանելու համար բոլոր պետութիւններն ահագին փողեր են ծախսում իրենց զինուորական և պատերազմական ոյժերը կրկնապատկելով։

ՔՐՈՆԻԿՈՆ

—

Վաղը, կիրակի, սեպտեմբերի 2-ին, օրուայ ժամը 1-ին, բացւում է կովկասեան ցուցահանդէսը։ Բացմանը ներկայ լինելու համար յատուկ հրաւիրաթղթեր են ուղարկուած բոլոր վարչութիւնների, հաստատութիւնների և ընկերութիւնների ներկայացուցիչներին։ Բացումից առաջ գլխաւոր շէնքում Վըրաստանի էքզարխ սրբազան Փլաւիանը գոհաբանական մաղթանք կըկատարի։ Այնուհետև քաղաքագլուխը ճառ կըխօսի, որով կըբացուի ցուցահանդէսը։

— Կովկասեան ցուցահանդէսի բուֆետում և ցուցահանդէսի մէջ առհասարակ անող բոլոր քիօսկներում մտնող փողերի մի որոշ տոկոս ծառայելու է ցուցահանդէսի օգտին։ Ուստի այդ փողերի վրայ կոնտրոլ սահմանելու համար, բոլոր այցելուները հրաւիրւում են բուֆետում կերած խմածի և քիօսկների համար վճարել ոչ թէ փող, այլ առանձին մարկեր, որոնք ծախւում են ցուցահանդէսի կենտրոնական և շարժական կասսաներում։ Եթէ պատահի, որ այցելուների գնած մարկերը բոլորը չըծախսուեն, մնացած մարկերը պահպանում են իրենց զօրութիւնը ցուցահանդէսի տեւողութեան ամբողջ ընթացքում և յետ չեն ընդունւում։

— Կովկասեան ցուցահանդէսի մասնաժողովը յայտարարում է, որ բոլոր դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիները կարող են ցուցահանդէսը մտնել ամեն օր ձրիաբար իրենց դաստիարակների կամ ուսուցիչների հսկողութեամբ։ Ցուցահանդէսը մտնելու համար պահանջւում է դպրոցի վկայական, որի մէջ պէտք է գրուած լինի, թէ քանի հոգի են այցելուները։ Որպէսզի միաժամանակ մեծ թւով աշակերտներ և աշակերտուհիներ չլցուեն ցուցահանդէսը, կարգադրիչ մասնաժողովը խնդրել է դպրոցական իշխանութեանը, որ նա կարգ սահմանի զանազան դպրոցների սաների համար։

— «Ս.-Պետ. Վեդ.» հաղորդում է, որ շուտով լուսաւորութեան մինիստրութեան կից կազմակերպուելու է մի առանձին յանձնաժողով, որը կըզբաղուի համալսարանների ռեֆորմների ծրագրի մշակութեամբ։ Այդ յանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար կըհրաւիրուեն համալսարանների ռեկտորները, մի քանի պրոֆեսորներ և լուսաւորութեան մինիստրութեան բարձրաստիճան անդամներ։ Համալսարանական ռեֆորմների ծրագրի մշակման համար իբրև նիւթ ծառայելու են ռուսական բոլոր համալսարանների յայտնած կարծիքները, որոնք արդէն ստացւում են մինիստրութեան մէջ ուսումնարանական շրջանների հոգաբարձուների եզրակացութիւնների հետ միասին։ Այդ կարծիքները մեծ մասամբ յանգում են այն բանին, թէ պէտք է վերականգնել 1863 թուի կանոնադրութիւնը, որի զօրութեամբ համալսարաններն ինքնավար հաստատութիւններ էին, ռեկտորներն ու պրոֆեսորներն ընտրւում էին և այլն։ Խնդիրը քննելիս, ի միջի այլոց, ի նկատի կառնուեն նաև մամուլի յայտնած կարծիքները։

— Վրաստանը Ռուսիայի հետ միացնելու առթիւ Թիֆլիսում լինելիք հանդէսները, լուսավառութիւնը, հրախաղութիւնը և քաղաքի զարդարանքները մօտաւոր հաշւով, ինչպէս հաղորդում է «Կավկազ»-ը, քաղաքի գանձարանից կըպահանջի մօտ 30 հազար րուբլու ծախք։

— Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Կաթողիկէ ս. Աստուածածին (Մէյդանի) եկեղեցում վաղը, կիրակի, սեպտ. 2-ին, հոգեհանգիստ կըկատարուի հանգուցեալ Դր. Ջանշեանի յիշատակին։

— Խմբագրութիւնս ստացաւ Վ. Փափազեանի «Պատմուածքներ», հրատ. Կեդրոնակ. գրավաճառանոցի, Թիֆլիս, 1901 թ., էջ 120, գինը 50 կ.։

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԲԱԳՈՒԻՑ.—Այս օրերս վախճանուեց բագուաբնակ շուշեցի վաճառական Մարգար Եղիազարեանը։ Հանգուցեալի եղբայրը նրա յիշատակին նուիրել է 3000 ր. ազգային զանազան հաստատութիւններին։

—

ՉԽԻՐ գիւղից (Քութայիսի նահ.).—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏ *)

Լեհաստանի հայերի պատմութիւնից, գրկտոր Անտոնիոս I-ի

—

1660 թ. էր։ Կամենեցի գաղթականները խումբ խումբ դիմում էին դէպի Խոտինի ճանապարհը, անհամբերութեամբ սպասելով երկու հիւրի, որոնց գալու մասին վաղուց արդէն ծանուցուած էր։ Դրանք աքսեյեան իմաստութեան երկու վառ աստղեր էին՝ Կրիստոֆ Չիմոնովիչ և Եան Գրիգոր Մուրատովիչ։ Դրանցից առաջինը նշանաւոր լեզուագէտ էր, հասկանում էր աշխարհիս համարեա բոլոր լեզուները։ Երկրորդը յայտնի վարդապետ էր, հմուտ ճարտասան և երգիչ, շատ բարեպաշտ և նախահայրերի կրօնին հաւատարիմ մի մարդ։ Երկուսն էլ հայրենիք էին վերադառնում, որովհետև ցերեկուայ լոյսը նրանք տեսնելու արժանացել էին Կամենեցում, իսկ Էջմիածնում ստացել էին գիտութեան լոյսը։

Երկայն էր նրանց ճանապարհորդութիւնը և վտանգաւոր. սուրբ քաղաքից (յիշենք ընթերցողներին, որ այդ քաղաքը Կովկասումն է և Երեւանից սառով գնալու (?) մի ժամ տարածութիւն է հեռու) Սև ծովի ափերով պէտք էր գնալ մինչև Ստամբուլ, այստեղից մինչև Խոտինեան Ռաիսը կարաւանով կամ այն չաուշի պաշտպանութեան ներքոյ, որ ուղարկւում էր Խոտինի փաշայի մօտ։ Բայց որովհետև կարաւանները յաճախ չէին գնում և Դիւանն էլ չաուշներ շատ սակաւ էր ուղարկում, ուստի երիտասարդներն օգտւում են Տաճկաստանի մայրաքաղաքում գտնուելուց. Նրանցից մէկն ուսուցանում էր, իսկ միւսը՝ ինքն էր ուսանում։ Չիմոնովիչն աղքատ ընտանիքի զաւակ լինելով և մանրավաճառութեամբ պարապելով Կամենեցում ծարաւի է լինում գիտութիւնների և ամենից առաջ իրեն նուիրում է արեւելեան լեզուների ուսումնասիրութեան։ Նրանից լաւ ոչ ոք այնպէս հիմնովին չգիտէր հայոց գրականութիւնը (այդ և հ. Պիդուն է խոստովանում), որ բոլորովին տարբերւում է Լեհաստան գաղթածների խօսակցական բարբառից։ Մօտաւորապէս նրանց մէջ այնպիսի զանազանութիւն էր, ինչպէս լատիներէնի և իտալերէնի մէջ. և բացի դրանից հայերի խօսակցական լեզուի մէջ պարսկերէն, տաճկերէն, թաթարերէն, ռուսերէն, լեհերէն և մինչև անգամ եբրայեցերէն բազմաթիւ խօսքեր կային։

Մուրատովիչը պատկանում էր Կամենեցի ազնուական դասակարգին։ Նրա Սեֆեր պապը Պարսկաստան էր գնացմ Սիգիզմունդ III-ի համար ակնեղէններ գնելու։ Իւր առաքելութիւնը նա լաւ էր կատարում, վաստակել էր շահի բարի տրամադրութիւնը և դրանով էլ արժանացել էր իւր թագաւորի բարեհաճութեան։ Վարդապետի մեծ եղբայրը յայտնի վաճառական էր և կոնսուլ Կամենեցում։

Սեպտեմբերի վերջին Կամենեցի բնակիչներն արժանացան իրենց ճանապարհորդների տեսութեան։ Բնակիչներն այս դէպքի առթիւ այնքան էին ոգևորուել, որ կամենում էին երկու համեստ երիտասարդների քաղաքս ժամանելու համար եկեղեցիների զանգերը տալ. Նրանց ուղեկցում էր միայն մի կիսամերկ տղայ, որ նստած էր մոլդաւական մաժում, ուր նրանից աղքատիկ իրերն էին տեղաւորուած... Սակայն հոգաբարձուներն ընդդիմացան երկրպագութեան անհամապատասխան մի այդպիսի արտայայտութեան. լուռ էին զանգերը. սակայն կանայք, բնական հետաքրքրութիւնից դրդուած, գոյնզգոյն պսակներով շրջապատեցին եկուորներին և տարան ազգականների հիւրասէր տները։

Նրանց յաղթական գնացքը ցոյցի բընոյթ ունէր։ Լուսաւորչական դաւանութեան կողմնակիցները նորեկ վարդապետներին նեցուկ էին համարում, մինչդեռ միութեան պաշտպանները, տրամադրուած չլինելով դէպի հիւրերը, աշխատում էին նսեմացնել հանդիսաւորութիւնը։ Բնակիչներից տղամարդիկ անտարբեր և չէզոք էին վերաբերւում նրանց, իսկ կանայք բարձրաձայն էին արտայայտում իրենց ցնծութիւնը։

Այսպէս անցաւ մի քանի օր։

Բայց ահա լուր է տարածւում, որ վարդապետը քարոզ է խօսելու մայր եկեղեցում։ Հետաքրքրութիւնը հասաւ իւր գագաթնակէտին։ Վաղ առաւօտեան սկսել էին արդէն լցուել եկեղեցին։ Սա շինուած էր այն ժամանակ Արևելքում ընդունուած ձևով։ Եկեղեցու լայնութեամբ շինուած էր մի վանդակ, որ նրան երկու մասի էր բաժանում. առաջին մասը, մուտքից, որ աւելի ցած էր, նշանակուած էր կանանց համար, իսկ երկրորդը, որ աւելի բարձր էր, բեմի մօտ, քահանաների, երգեցիկ խմբի և այր մարդկանց համար էր։ Ժամասացութիւնը երկար տևեց։ Պատարագի արարողութիւնից յետոյ սկսեցին կարդալ զանազան կտորներ Աւետարանից, իսկ ապա երգել։ Ընկեց վարդապետը մենակ, բայց յետոյ շարունակեց երգեցիկ խումբը։ Երգեցին հատուածներ սաղմոսից, և ոգևորուած հաւատացեալները ձայնակից էին լինում խմբին, այնպէս որ այդ անկանոն բղաւոցի մէջ կորաւ վարդապետի ձայնը. Ամենքն անյայտ եւ միայնակ անդրադարձան թէ Նրա մէջ մի ինչ որ քերովբէական բան կայ։

Ահա և երգեցողութիւնը կտրուեց. Նըշան տուին... Վարդապետն սկսում է իւր քարոզը։ Նա մօտեցաւ վանդակապատին, որ անջրպետում էր տաճարը, և, կիսով չափ թեքուելով դէպի կանանց կողմը, աշխոյժ շարժումներով սկսեց նկարագրել իւր թափառելը, եկեղեցու ողբալի վիճակը Բարձր Հայքում, յայտնեց ժողովրդին կաթողիկոսի օրհնութիւնը և նրա խնդիրը, որ հաստատ մնան ս. Լուսաւորչի աւանդած հաւատին և դաւանանքին։ Քարոզում նա յիշեց, որ Իվովի ժողովուրդը տրամադրուած է և հակուած դէպի նորամուծութիւնները, որոնք կարող են կորստաբեր ազդեցութիւն ունենալ Լեհաստանի սահմաններից դուրս ապրող եղբայրակիցների վիճակի վրայ։

Քարոզի սկզբում ունկնդիրներին տիրող խորին լռութիւնն այժմ փոխուել էր հաւանութեան և համաձայնութեան բարձրաձայն արտայայտութեան։ Ֆանատիկոս, յուզուած ժողովուրդն այդ վայրկեանին նահատակուելու պատրաստ էր։ Սակայն քարոզի ոգևորութիւնն բատ երեւոյթին թուլացել էր. հազիւ հազ էր նա հատուածներ բերում ս. գրքից, խօսքը կտրում էր, կարծես թէ խիստ զբաղուած լինէր ուրիշ բանով, կարծես թէ ուշքը վրան չլինէր։ Եւ տրդարև, նրան զարկել էին մի զոյգ սև աչքեր, որ կրակոտ հայեցուածքով հարուած էին տուել նրա սրտին։ Անջրպետից ոչ հեռու կանգնած էր մի կին, որ այնքան էլ երիտասարդ չէր, բայց յարգանք ներշնչող. դա Եղիսաբէթ Սեֆերովիչն էր, Կամենեցում գտնուող հայազգի կայազօրային մայրապետը։ Ինչպէս արդէն մեզ

*) Տես «Նոր-Դար» № 135.

Գիւղս գտնւում է Զօրապան գաւառում, Դվիբիլ կայարանից 18 վերստ հեռու դէպի հիւսիս, և հաստատուած է բարձրադիր լեռան ստորոտին։ Տեղիս օդն ու ջուրը շատ մաքուր են, իսկ հողը բարեբեր։ Գիւղից արտադրւում է գլխաւորապէս խաղող, մետաքս և բամբակ։ Տեղիս հայերն անյիշատակ ժամանակներում գաղթել են այստեղ Հայաստանի կողմերից. այդ ժամանակ նրանք 7 տուն են եղել, իսկ այժմ մինչև 70 տուն հայեր կան այստեղ: Դրանցից ոչ ոք իր մայրենի լեզուն չի իմանում. չգիտեն նոյն իսկ, թէ հացին կամ ջրին ինչ են ասում հայերէն։ Ուսումնարան չունենք. գիւղիս հայ մանկտին բոլորովին անուս է մեծանում իր նախկին սերնդների նման, և այս կարևոր խնդրի մասին ոչ ոք չի մտածում: Վերջին ժամանակներս մեր քայքայուած փոքրիկ եկեղեցին նորոգեցինք, այդ բանի վրայ ծախսելով 12 հազար ր., և մտադիր էինք եկեղեցու զարդարանքը հոգալ, քանի որ եկեղեցին ոչ մի զարդ ու ս. պատկեր չունի։ Բայց ահա այս տարուայ յուլիսի 31-ին հրդեհ պատահեց գիւղումս և այդ հրդեհին զոհ գնացին 32 խանութ իրենց ապրանքներով։ Այդ պատճառով այժմ մեր գիւղացին այլ ևս ոյժ չունի եկեղեցու զարդարանքի, ինչպէս և զանգակատան, որ շինուած չէ դեռ ևս, մասին մտածելու: Ուստի գիւղիս հայ հասարակութիւնը խնդրում է բարեսիրտ և եկեղեցասէր անձերին, որ բարի լինեն եկեղեցին զարդարելու իւրաքանչիւրն իր կարողութեան չափով։ Իսկ եթէ կըգտնուի մէկը, որ յանձնառու լինի եկեղեցու զանգակատան կառուցմանը, որի վրայ կըծախսուի մօտ 250 ր., այդ դէպքում գիւղացիներն ի նշան երախտագիտութեան ամեն տարի ծննդեան և զատկի տօներին բարերարի անունը կըյիշեն եկեղեցում և պատարագ մատուցանել կըտան: Նուէրները կարելի է ուղարկել Թիֆլիսի հոգևոր կառավարութեան միջոցով, նոյնպէս այդ կառավարութեանը կարելի է յանձնել զանգակատան շինութեան համար ծախսուելիք գումարը։

—

ՄԵՐՎԻՑ.—Ձւտով երկու տարին կը լրանայ, ինչ մնացել ենք առանց քահանայի։ Այս առթիւ քանի-քանի անգամ խնդրագրներով ու հեռագրներով դիմուել է Աստրախանի թեմակալ առաջնորդին, որպէս զի մի քահանայ ուղարկէ մեզ կամ թէ նորը ձեռնադրէ, բայց մեր խնդիրքը մինչև օրս մնացել է անկատար։ Ամենայետին գիւղն անգամ ունենում է իր քահանան, իսկ Մերվի նման մի կեդրոն բոլորովին զուրկ է մը նացել հովուից։ Ներկայումս Մերվի հայ հասարակութիւնն այն օրին է հասել, որ իր ամենաանհրաժեշտ ծիսակատարութիւններն անգամ կամ չեն կատարւում կամ, եթէ կատարւում են, կատարողն օտար եկեղեցու պաշտօնեան է։ Օրինակները սակաւաթիւ չեն։ Պատահել են մեռելներ, որ կամ օտարազգական քահանան է թաղել իր ծիսակատարութեամբ և կամ թաղուել են առանց քահանայի։ Պատահել են հիւանդներ, որ մեռել են առանց հոգևոր վերջին մխիթարութիւնն ստացած լինելու: Եւ այս ամենի պատճառը մեր սրբազան թեմակալի անփութութիւնն է ու կարիքի վրայ ուշք չդարձնելը: Դուցէ առարկուի, որ Ասխաբադում քահանայ կայ, կարելի է նրան հրաւիրել անհրաժեշտութեան դէպքերում։ Բայց պիտի իմանալ, որ հազիւ իր օրապահիկն աշխատող աղքատը ո՞րտեղից կարող է ճարել ուրիշ համայնքի քահանան հրաւիրելու համար նրա ճանապարհածախսն և այլ հազար ու մի ծախսերի փողը։ Ասում են, որ «չլացող երեխին մայրը ծիծ չի տալ». այս քանի անգամ եղաւ, որ մենք դիմեցինք ուր հարկն էր, բայց ոչինչ լաւ հետևանքի չհասաւ մեր դիմումը։ Ո՞ւր դիմել և ում գանգատուել վերին աստիճանի վրդովեցուցիչ այս անտարբերութեան դէմ։

—

ՂԶԼԱՐԻՑ. — Արիստակէս եպիս. առաջնորդութեան օրով, մեր թեմի հոգևորականութեան շարքում չւտով մի գոհար ևս կաւելանայ։ Քահանայորդի Տ. Աւագեան ուզում է փաթթուել սև վերարկուի մէջ, չկարողանալով հաստատուն պաշտօն ճարել. Թէ ինչպիսի հոգևորական կըգտանայ այդ պարոնը, այդ մի կողմը թողնենք. միայն այսքանը կասենք, որ նա Մոզդոկում լաւ «պարեկքատր» պարել է սովորել, որի համար երևի արժանանում է հոգևոր կոչման։ Երանի համայնքին, եթէ այդ պարոնը իր հօր նման քահանայ կըլինի. այն ժամանակ Արիստակէս եպիսկոպոսը կարժանանայ շնորհակալութեան։ Քանի որ խօսքս Արիստակէս եպիսկոպոսի մասին է, յիշենք այստեղ նրա անգործունէութիւնն ապացուցանող մի փաստ։ Տեղիս հոգ. կառավարութիւնը 7 տարի առանց յաջորդի մնալով, ժողովրդի ինքնըլիգենտ դասակարգը ցանկութիւն է յայտնել ունենալ մի այնպիսի աչքոտ, որ կարողանար ժողովրդին քարոզել, քանի որ տեղումս քարոզիչ քահանաներ չկան, հաշուելով և սրբազանի նոր ձեռնադրած Զաթիրեան քահանան (այդ քահ. սրբազանի երկրպագուներիցն է). որը թղթի վրայ գրուած մի ինչ որ բան կարդում է, բայց ժողովուրդը ոչինչ չի հասկանում, նրա թոթովախօս լինելու պատճառով։ Սրբազանը մինչև օրս չի կատարում ժողովրդի խնդիրը, երևի այն պատճառով, որ ամեն բան չի կարող կեդրոնացնել իր ձեռքի մէջ։ Խօսք չկայ ասելու, որ լաւ յաջորդը ժողովրդի մէջ սէր կարող է արծարծել դէպի Ս. Էջմիածինը, հրսկել քահանաների և հոգ. կառավարութեան գործերի վրայ, տարէնը մի անգամ շրջել թեմը, քանի որ Արիստակէս եպիս. իր եօթամեայ պաշտօնավարութեան ընթացքում մի անգամ է շրջել թեմը, այն էլ ոչ բոլոր քաղաքները։ Արիստակէս եպիս. փոխանակ ինքը հոգալու յաջորդի մասին, ժողովրդի խնդիրըն անգամ անհետևանք է թողնում և զբաղւում է ուրիշների պակասութիւնները հաստատող դոկումենտներ ժողովելով: Միթէ սխալ է հանգուցեալ Մակար կաթողիկոսի նկատողութիւնը թէ՝ «գերապատ. ձեր խպառ թողեալ է զդեկ վարչութեան առաջնորդական պաշտամանըդ» («Քահ. խնդիր» երես 36):

—

ԿՈԹԻ գիւղից (Ղազախի գաւ.). - Այս տարուայ մայիս ամսից մինչև օրս, այսինքն չորս ամսուայ ընթացքում, Ղազախի միմիայն Կոթի գիւղից գողացուել է աւելի քան 200 գլուխ կով, եզ, ձի ու գոմէշ, առանց հաշուի առնելու կորած ոչխարների, այծերի և նման մանր կենդանիների թիւը։

—Այս տարի Ղազախի գաւառի ցանքսերն ընդհանրապէս և մեր գիւղինը մասնաւորապէս շատ վնասուեցին դաշտային մկներից։ Միւս կողմից չարագործ մարդիկ էլ անխնայօրէն հրդեհեցին գիւղացիների խոտը, խուրձը, կոմը, մարագը, ջրաղացը և այլն և այդպիսով վնաս հասցրին գիւղիս բնակչութեանն աւելի քան 3,000 ր.։

ԵՒ ԶՈՓՆ ԱՆՑԱՒ

(Նամակ Բագուից)

—

«Այսօր հայ ազգը և հայ. եկեղեցին տօնում է իր մեծ բարերարներից մէկի յիշատակը, կատարում է իր քաղոյական պարտաւորութիւններից մէկը».— այսպիսի բառերով, առանց «Ցանուենհօր»-ի, սկսեց իր քարոզն Աստրախանի առաջնորդացու եղիշէ վարդապետ Մուրադեանը և այնուհետև անցկացաւ սերաստացի ուսումնատենչ մանուկի—Մխիթարի կենսագրութեանը, որ տեեց ½ ժամ իր դրուատումներով, մինչև հասաւ Հռոմ, պապի աթոռը. «Հռոմը,—առաջ տարաւ իր քարոզն հայր սուրբը,—թէև փոփոխուած էր արտաքինով, բայց ներքինով էլի ունէր նոյն կռապաշտ թագաւորները — պապերը. Մխիթարը որոշել էր այդտեղ գործել, քանի որ ս. Էջմիածինը նրան անաջող թուաց, բայց այդ կռապաշտ արքաները նրան խոչընդոտ հանդիսացան. Նա ստիպուած էր զոհ բերել, և այդ զոհը մեծ էր, սակայն բերեց, քանի որ ս. Նպատակներ ունէր, որոնց հարկաւոր էր հասնել (ի հարկէ, նպատակն արդարացնում է միջոցը*), ընդունեց կաթոլիկ դաւանութիւնը, դառաւ պապական և սկսեց գործել հայերի համար. և նա գործեց, հնութեան փոշիներից հանեց ազատեց մեր գիրն ու գրականութիւնը, դպրութիւնն ու մատենագրութիւնը, աւերակների տակից հանեց արձանագրութիւններ, սկպագրեր, տուեց մեզ ամենալաւ Աստուածաշունչն ու Աւետարանը, որ միակն է իր տեսակում (էլ մեր հին թարգմանիչները ոչի՞նչ... քանի որ կաթոլիկ հայերը մեզ տալիս են նոր փոփոխուած Աստուածաշունչ...). ազատեց, փրկեց այդ ամենը կորստից, որով և հայ ազգիս փրկեց մահից.. Ուրեմն տեսնո՞ւմ էք որքան մեծ է Մխիթարեանների արած բարիքը մեր հայ ազգին. այդ գիտնական հայերն (1888 - 89 թուականին երբ բանակռիւ կար նրանց և ձեր պատրիի մէջն, նրանց հրատարակեցիք արդէտ, իսկ այժմ գիտնական, ասել է՝ ձեր երեկուայ սև այսօր սպիտակ է, երեկուայ սպիտակը՝ այսօր սև) աշխարհ գարմացրին իրենց գիտութեամբ, ուսումնական հռչակ հանեցին, հայ ազգին բարձրացրին (հայ եկեղեցին էլ ցածացրին) օտարների աչքում, որոնք այսօր պարծանքն են հայութեան, նրա կեանքի կոթողը, նրա գոյութեան սիւնը»։ (Տեսնելու էր, թէ ինչ ոգևորութեամբ էր արտասանում վերջին նախադասութիւնները հայր սուրբը):

«Այո, նրանք թէև կրօնով կաթոլիկ են, բայց ազգով հայ. այդ դաւանութեան տարբերութիւնը նշանակութիւն չունի»։

«Ճշմարիտ է, կաթոլիկ եկեղեցին եղել է թշնամի Հայաստանեայց Եկեղեցուն, եկել են մեր երկիրը քարոզիչներ, բայց դրանք Մխիթարեաններից մեծերը չեն, այլ փոքրերը. (ապա մեծերն ինչ կլինեն) և միշտ հայոց եկեղեցին ներել է այդպիսի բաների, վասնզի նրա մեծութիւնը հէնց դրա մէջն է կայանում (այնպէս որ եթէ վաղը կաթոլիկ հոգևորականութիւնը մեզ բոլոր հայերիս կրօնափոխ անէ, ինչ ասել կուզէ որ էլի - հայր սուրբի ասածով - հայ եկեղեցին ներելու է, թէև իսկապէս ձեզ նման հայ հոգևորականներն են ներելու...)»։

«Դուցէ այժմ ասէք, սիրելի ժողովուրդ, թէ «հայր սուրբ, ինչ դաւանական խրնդիր է, որ յարուցանում էք հայոց եկեղեցու ազատ բեմից (ուր այսօր ամեն մի փախած բարձրանում է), դուք միմիայն քարոզ խօսեցէք և հոգեհանգիստ կատարեցէք»։ Այդ այդպէս է. Մխիթարեանների վեհ գործերն աչքի առաջ ունեցողները, հասկացողները չեն ասել, բայց որովհետև ես այսօր և երեկ ստացայ մի երկու նկատողութիւններ այս առթիւ, դրա համար բացատրելու եմ իմ կարծիքը և հայեացքը»։

«Քրիստոնեայ եկեղեցին խտրութիւն չի դնում ոչ հրէայի, ոչ հեթանոսի, ոչ արուի, ոչ էգի մէջ. Նրա համար ամենքըն էլ մի են. (այդ չէք իմանում որտեղ ո՞վ ում է ասել. «Գործք Առաքելոց»-ը լաւ կարդացէք, միմիայն ո՞չ Վենետիկի տպագրութիւնը, որտեղ հրատարակուած ամեն մի հոգևոր գիրք փոփոխութեան է ենթարկուել, ինչպէս որ դուք դրուատելով նկատեցիք): Քանի որ հայոց եկեղեցին էլ քրիստոնէական ազատ եկեղեցի է, ուրեմն ինչո՞ւ պէտք է խտրութիւն դնէ կաթոլիկի և հայ քրիստոնեայի միջև. միթէ կաթոլիկն աւելի վատ է քան հեթանոսը. ով որ մի գործ արել է, լինի դա լեռնաչափ թէ մանանեխի հատիկի (այդ—բանակը. իսկ որտե՞ղ...), Հայաստանեայց Եկեղեցին յիշատակելու է, որովհետև նա ներողամիտ է, ազատամիտ է. Նա ներում է մարդասպանին, կախաղան բարձրացողին, ապա որքա՞ն ևս կաթոլիկութեան. առանձնապէս գալով Մխիթարեան ուխտին՝ նա նրան պիտի երախտիքով յիշէ, քանի որ ազգի համար գործելով միևնոյն է թէ եկեղեցու օգտին է գործել. չպէտք է նեղ հայեացք ունենալ (հայ՞ր, աչքներդ լա՞յն բացէք...). յիշենք լուսամիտ և ուղղամիտ Կիւրեղ եպիսկոպոսին (այժմ լուսամիտ և ուղղամիտ դառաւ. երեկ էր որ գրում էր ձեր օրգանում նրա հասցէին՝ «մեռելի ետևից կամ լաւ, կամ ոչինչ»), որ հրէայի համար անգամ հոգեհանգիստ կատարեց (որքան ճիշտ է՝ չգիտենք). ուրեմն ինչո՞ւ եկեղեցում չտօնենք Մխիթարեաններին (մինչև անգամ հարկաւոր է ս. Էջմիածնի օրացոյցի մէջ մտցնել), ինչ անենք թէ կաթոլիկ են. միթէ հայ քրիստոնեայ են եղած Պօղը, Մակարը, Աղդէն, Մարկոսը և այլն, որ Հայաստանեայց Եկեղեցին յիշում է. Նրանք գործիչներ են եղել (այո՛, գործիչներ, բայց ոչ հայոց եկեղեցու մեծ ուսուցներ). դեռ աւելին կասեմ, մենք մաղթենք Արարչին, որ Մխիթարեանները ոչ թէ 200-ամեակ, այլ 500-ամեակներ տօնեն. ինձ հետ աղօթեցէք, սիրելի ժողովուրդ, որ Մխիթարեան միաբանութիւնների պէս միաբանութիւնների թիւը մեր մէջ աւելանայ՝ 200-ներ դառնայ» .. (և այն ժամանակ պրծանք)...

Աստրախանի առաջնորդացուի *) քարոզն առաջ բերելով, առաջ բերենք այժմ այն սկատողութիւններից մէկի պատճէնը, որ հայր սուրբն ստացել էր իր քարոզից առաջ.

*) Փակագծերի մէջ եղած խօսքերը բոլորն էլ մերն են: Ծանօթ. Թղթակցի.

*) Աչքներդ լո՛յս, աստրախանցիներ, տեսէք ինչպիսի հովիւ է գալիս այդտեղ, ուր եզուիտներն ու մխիթարեաններն առատ հունձ են անում։ Ծ. Թ.

յայտնի է, այդ կոյսերն առանձին եկեղեցի, անապատ չունէին։ Մայրապետն արժանացել էր եկեղեցու առաջին աստիճանների, չունէր միայն քահանայական, որովհետև եկեղեցին կանանցից քահանաներ չէր ձեռնադրում։ Մօլեռանդ կերպով նա կապուած էր հին եկեղեցական արարողութեան հետ և կամենում էր իր ամբողջ ընտանիքը ժողովել նրա դրօշակի ներքոյ, ամենքին նուիրել Աստուծուն սպասաւորութեան։ Նրա ազգեցութեան շնորհիւ մեծ աղջիկն ու երկու թոռը կուսական փարաջա էին հագել, իսկ փոքրիկը՝ տասնվեց տարեկան Դօվլաթն աշխարհական զգեստով կանգնած էր եկեղեցում մօր կողքին և միամիտ բերկրութեամբ լսում էր երիտասարդ վարդապետին։

Եւ ահա այդ օրիորդի սև աչքերն էին ազդել արեւելցի վարդապետի ճարտասանութեան կեղուն ընթացքի վրայ։ Սակայն քարոզն ամբողջ երկու ժամ տեեց:

Դրանից յետոյ տեղի ունեցաւ մի նոր, արտասովոր հանդէս. զոհաբերութեան, մատաղի՝ ծէսը, որ հայերը վերցրել են հրէաներից: Երկու մարդ սաճար բերին մի եզ. ահագին մեծութեան վախեցած կենդանին զարդարուած էր գոյնզգոյն ժապաւէններով, որ կապել էին պոզերից, որոնց վրայ էլ զանգուլակներ էին ամրացրած։ Պոզերի վրայ մոմեր էին տնկած և վառած, իսկ մէջքը ծածկուած էր մի սիրուն գորգով, զարդարուած ոսկէ նախշերով և չորս կողմից թանկագին կտորով կարած։ Աստուծուն զոհ նշանակուած եզը դանդաղով մօրթում էին, իսկ նրա թարմ միսն օրհնած կրակով խորովում էին սեղանի վրայ և բաժանում ժողովրդին։ Այս անգամ հանդէսը գլուխ չեկաւ։ Զարաճճիներից մէկը եկեղեցու մօտ հրայան արձակեց—վախեցած եզը դուրս պրծաւ, յիր ու ցան արեց չփոթուած կանանց, իրեն համար ճանապարհ բաց արեց և եկեղեցուց դուրս փախչելով՝ սկսեց կատաղի կերպով վազվզել քաղաքում, յետևից ցեխի մէջ քարշ տալով գորգը... դա մեծ զուարճութիւն պատճառեց լեհ և ռուս ամբոխին։ Ծափ տալով փողոցի տղաները գոռում էին.—ահա՜ հայոց սուրբ եզը...

Սակայն վերադառնանք Մուրատովիչին: Նրա գալուստն ու յաճախակի քարոզներն արծարծեցին դիւրաթեք և անտարբեր գաղթականների ֆանատիկոսութիւնը և ամրացրին նրանց կապը դաւանական մոլորութիւնների հետ։ Այս շարժման գլուխն էր անցել վարդապետի հետ և Սիֆերովիչ կոյսը, որ քաղաքում քիչ ազդեցութիւն չունէր։ Իլվովից ուղարկուող կարգադրութիւններն այլևս չէին կատարւում, և կրօնական հարցերի վերաբերմամբ Կամենեցն սկսեց դիմել Խոտին, ուր հայ լուսաւորչական եպիսկոպոսն էր։ Իլվովից դժգոհները, ինչպէս օրինակ հ. Բրզօսկին, որի մասին յիշում է և հ. Պիդոն, և մի քանի անըրդուելի վարդապետներ ապաստաբան և հիւրընկալութիւն գտան Կամենեցում:

Երիտասարդ վարդապետը, ինչպէս ամենքն էին ասում, սիրահարուած էր գեղեցիկ Դօվլաթի վրայ: Արդարև նա գեղեցկուհի էր։ Սեֆերովիչների սերունդը հռչակուած էր իր արտասովոր գեղեցկութիւն ունեցող կանանցով, իսկ վարդապետը շատ մեղմ սիրտ ունէր։ Ցաճախակի հրաւիրուելով մայրապետի մօտ խորհրդածութիւնների համար, նա միշտ այնտեղ պատահում էր այդ օրիորդին։ «Վարդապետը,—ասում է տարեգիրը.— պատրաստւում էր քահանայութիւն ընդունել, որպէս զի ամուսնանայ օրիորդի հետ, որովհետև եղել են դէպքեր, ինչպէս ծերերն են պատմում, երբ վարդապետներն ամուսնացած հոգևորական են դարձել... Նա մինչև անգամ իր անկողինն արդէն տարել էր ժամ, որ այնտեղ 40 օր աղօթէ, ապաշխարէ»։ Սակայն աղջկայ մայրը չէր համաձայնել, որ այդ ամուսնութիւնը կայանայ։ Մայրն ուրիշ բան ի նկատի ունէր. Նրա նպատակն էր աւելի ամրապնդել քայքայուող հաւատը. յամառութեամբ և հաստատուն կերպով կռուել մինչև վերջ, հին սովորութիւններից և ոչ մի քայլ չհեռանալ։ Իւրայինների շրջանում նա նկատում էր անտարբերութիւն և ոչ մի յարգանք դէպի այդ աւանդութիւնները, որ սուրբ էին նրա համար։ Եւ այդ կնոջ ֆանատիկոսութիւնը խոչնդոտների պատճառով աւելի էր սաստկանում, սովորական սահմաններից դուրս էր գալիս։

Երկու եկեղեցիների միութեան պատմութեան ասպարէզում, ուր աւելի շատ խորամանկութիւն և խարդախութիւն էր գործ ածւում, քան թէ եռանդուն ընդդիմադրութիւն, այդ կինը խիստ աչքի է ընկնում. Նա կանգնած է անդրդուելի, բողոքում է բարձրաձայն մինչև ի մահ։ Ինչպէս կարող էր նա փորձութեան, աշխարհային գայթակղութեան յանձնել իր աղջիկը, որ Աստծուն էր նուիրուած։ Մուրատովիչը մերժումն ստացաւ, բայց և այնպէս ֆանատիկոս պառաւի կողմնակիցը մնաց, և յայտնի չէ, թէ այդ կռիւն ինչով կըվերջանար, եթէ 1662 թուին Դօվլաթը չմեռնէր նրա մահից յետոյ անմխիթար վարդապետը հեռացաւ աստուածաբանական վէճերից: Նրա լեզուանէտ Զիմոնովիչ ընկերը՝ որ միութեան ջերմ պաշտպան էր, համոզեց դժբաղդ սիրահարին թողնել Կամենեցը, և երկուսը միասին Իլվով գնացին։ Մուրատովիչի հեռանալով լուսաւորչականները կորցրին վինաբանական ասպարէզում մի փառաւոր ոյժ, որ իր առեւտրաքանութիւններով անպարտելի էր—այդ իսկ վայրկեանից հայերի գործը տապալեցաւ...

(Կը շարունակուի)

Մ. Բարխուդարեան

«26 օգոստ. 1901 Թ. Բագու։
«Բարձրապատիւ Հայր
«Եդիշէ վարդ. Մուրադեանին.

«Այսօր պատահմամբ տեղեկացայ, որ տեղիս հայոց եկեղեցում Մխիթար աբբայի հոգեհանգիստն է կատարուելու, քարոզ է խօսուելու և այդ քարոզ խօսողը ինքներդ էք լինելու. ես դրան չեմ հաւատում, բայց չհաւատալով հանդերձ հարկաւոր համարեցի նամակս ձեզ գրել։

«Իբրև Հայաստանեայց Եկեղեցու հովիւ, Ձեզ քաջ յայտնի է, որ Հայոց Եկեղեցին չի կարող յարգել այն մարդու յիշատակը, որ իւր ոգով նրան հակառակ է եղել, չի կարող հոգեհանգիստ կատարել այն անձի վրայ, որ հեռանալով նրանից՝ մտել է ուրիշ եկեղեցու գիրկ և միշտ աշխատել է ի վնաս նախկինի. եթէ այդ անէր, միևնոյնն է, թէ յարգէր Նիկոլ չեպիսկոպոսների յիշատակը, հոգեհանգիստ կատարէր Ազարեանների վըրայ։ (Փակագծի մէջ յիշենք, որ այդ՝ եկեղեցու պաւանութեան շրջանում, իսկ եկեղեցուց դուրս՝ ի հարկէ որ Նիկոլի ու Մխիթարեանների գործերի մէջ տարբերութիւն կայ)

«Ձատ հեռու չգնանք. յիշենք 1888 Թ. Հռոմի պապի կոնդակը, որ մեզ բոլոր հայերիս մոլորուած համարելով, Հայոց Եկեղեցին էլ աղանդ՝ հրաւիրում էր մտնել իւր փարախը։ Անշուշտ Դուք այդ ժամանակ կարդացած կլինիք Հայոց Եկեղեցու Պետի և Կ. Պոլսի պատրիարքի կոնդակներն ուղղած հայ ժողովրդին. իսկ ինչ արեց այդ ժամանակ Մխիթարեան միաբանութիւնը. այդ եղուիտութեան դէմ չբողոքելուց զատ՝ սաստիկ վշտացաւ այդ անաջողութեան։

«Մխիթարեան միաբանութիւնը ոչինչ բարի առընչութիւն չունենալով հանդերձ Հայ Եկեղեցու հետ՝ ընդհակառակը, դեռ աշխատում է որ ամբողջ հայերի հոգին ու հաւատը առնի իւր ձեռը ս.Էջմիածնից նրան հեռացնելով, ինչպէս իրենք-իրենց փանք կոչող հայ կաթոլիկների սիրտն ու հոգին իւր ձեռն է առել Հռոմի պապը։

«Հայ ժողովուրդը իւր եկեղեցու միջոցով ոչինչ ընդհանուր կապ չունի նրանց հետ, իսկ եթէ ուզենայ ունենալ էլ, դուք հայ հոգևորականներդ պէտք է ետ կացնէք նրան. իսկ թէ եկեղեցուց դուրս ինչ կանէ, կամ ինչ կըտօնէ հայ ժողովուրդը՝ դա միանգամայն նրա քաղաքացիական ազատ իրաւունքն ու կամք է։

«Այդ բոլորից յետոյ կայ մի աւելի կարևոր խնդիր.—այդպիսի արտաքոյ կարգի հոգեհանգիստ և քարոզ լինելու համար պէտք է լինի հայոց հոգևոր Պետի ընդհանուր թոյլտուութիւնը, կամ գէթ նրա մասնաւոր հաճութիւնը. արդեօք այդ ստացուած է. եթէ այո, այն ժամանակ Ձեզ ասելու ոչինչ չունենք, եթէ ոչ, ոչ մի հայ հոգևորական չի կարող ինքնագլուխ բան բռնել, այլապէս ոչ մի իշխանութիւն և կարգ չի կարող մնալ հայոց հոգևոր հերարխիայի մէջ. և այն հոգևորականը, որ կըհամարձակուի այդ ամենը ոտնակոխ անել՝ նա պատասխանատու է Աստուծոյ, Հայոց Եկեղեցու և Նրա Պետի առաջ։

«Սոյն նամակս իսկապէս հարկաւոր էր հայր Արսէն Ղլտճեանին գրել, բայց ծանօթ լինելով նրա մտաւոր անընդունակութեան հետ՝ Ձեզ ուղղեցի։

«Մնամ խորին ակնածութեամբ դէպի Ձեր կոչումը՝

«Յով. Մալխասեան»։

Այստեղ առաջ բերելով մի հայ հոգևորականի քարոզը և մի աշխարհականի նամակը (որոնք երկուսն էլ միևնոյն ժամանակ եղել են և ուսուցիչ և աւագ ուսուցիչ հայոց ծխական դպրոցներում), թողնում ենք ընթերցողի հասկացողութեանը և հարցնում ենք. ասացէք, ի սէր մեր սուրբ երախտաւոր հայրապետների, կա՛յ արդեօք մեզանից զատ մի ուրիշ ազգ, որի հոգևոր դասն ուզենայ քանդել հայրենիքը, առանց իրաւունքի, առանց խոհականութեան. ո՞ւր պէտք է հասնի այս ամենի վերջը. ժողովուրդը վշտանում է, սառչում է իւր մայրենի եկեղեցուց, հովիւն անմիտ է, հոտը ցրիւ է գալիս, բաժին դառնալու գայլերին. .

Ընթերցողի լուրջ դատողութիւնն ենք հրաւիրում, իսկ ո՞ւմ անկն է՝ լուրջ ուշադրութիւնն այս ամեն օր կրկնուող չարիքների վրայ։

Թղթակցութիւնս վերջացրել էի, որ ձեռս ընկաւ երեկուայ (օգոստ. 26-ի) «Կասպի»ն, ուր զետեղուած է հետևեալ յայտարարութիւնը. «Въ воскресеніе, 26-го августа, по случаю 200 лѣтняго юбилея со дня основанія ученаго братства Мхитаристовъ въ Венеціи, въ армянскомъ соборѣ назначена литургія и панихида по основателѣ Мхитарѣ и усопшимъ членамъ братства, почему почитатели ихъ помяти приглашаются въ церковь».

Հետաքրքրական է, թէ այդ յայտարարութիւնն ո՞վ է տուել. հայոց եկեղեցու միաբանութիւնը, թէ մասնաւոր անհատներ. եթէ մասնաւոր անհատներ՝ նրանք պէտք է թոյլտուութիւն առնէին հայոց եկեղեցու վարչութիւնից, եթէ եկեղեցու վարչութիւնն ինքն է, ի՞նչ օրէնքով և ի՞նչ իրաւունքով։ Հարցնում ենք և պատասխանի սպասում։

Մէն Ցիկ

Բագու, 27 օգոստ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՄԱՆՋՈՒՐԻԱՅԻՑ
(«Նոր-Դար»-ի թղթակցութիւն)

Ա-Ժէ-Խէ քաղաք, 25 յուլիսի.—Թէպէտև մեծ բռունցքների ապստամբութիւնը ճնշուած է համարւում, սակայն Մանջուրիայում տակաւին խաղաղութիւնը բոլորովին վերականգնած համարել կարելի չէ։ Խունխուզ կոչուող աւազակները, որոնք ըստ մեծի մասին ծառայութիւնից փախած չինական զինուորներ են, զինուած Մաուզերի և այլ դրութիւնների կատարելագործուած հրացաններով, իսկ երբեմնապէս նոյն իսկ թնդանօթներով, մեծ ու փոքր խմբերով շըրջում են Մանջուրիայի և Մոնղոլիայի այս ու այն կողմերն ու յարձակումներ գործում խաղաղ բնակիչների, երկաթուղու ծառայողների և երբեմնապէս մինչև անգամ Սունգարի գետով երթևեկող շոգենաւերի վրայ։ Նրանց երկիւղից ամեն մի շոգենաւի վրայ մի-մի թնդանօթ և որոշ թուով պահակ զինուորներ կան։ Այդ գետի ամենավտանգաւոր տեղը համարւում է Սան-Սինի և Խարբինի միջև։

Խունխուզների երկիւղից չինացիք, որոնք տակաւին խառնակութիւններից առաջ խօսս էին տալիս ռուսական թուղթ փողից և միշտ աշխատում էին թուղթը ոսկու և արծաթի վերածել, այժմս ընդհակառակը թաշկինակների մէջ չինական և ռուսական արծաթ փողեր լցրած ման են գալիս և երբեմն նոյն իսկ մի քիչ էլ աւել տալով թուղթ դըրամի են վերածում։ Այդ բանին նրանք հետևեալ բացատրութիւնն են տալիս ռուսերէն. «Эдо луски гумага деньги шибгода шнгоо есть» («չնգօ» բառն արտասանելիս բութ մատը վերև են բարձրացնում). Када Хунхуза плихади есть, мая гумага деньги все на калманъ пляжи, цуба хади; а селбло деньги шибго чежоли есть, куда мая вазьми?»։ Այս սոսկալի ռուսերէնը որ հայերէն թարգմանենք, դուրս կըգայ հետևեալը. «Երբ խունխուզները յարձակուին, թուղթ դրամը կըդնեմ գրպանս ու կըփախչեմ, իսկ արծաթը շատ ծանր է, ո՞ւր կարող եմ տանիլ»։

Մանջուրիայի պատերազմական գործերում առաջնորդութեամբ սախալինցի հայերից, վրացիներից և ռուսերից կազմուած կամաւորների խումբն զգալի ծառայութիւններ արաւ։ Այժմս յոյս կայ, թէ նրանք իրենց մատուցած ծառայութեանց համար իրաւունք ստանան հայրենիք վերադառնալու։

Մի թաւրիզեցի հայ ես,—Արշակ Մահտեսի-Բաղդասարեան,—տարւոյս ապրիլի 20-ին, համաձայն Խարբինի ոստիկանապետի հրաւէրի, յանձն էր առել չինացի թարգմանի և մի պահակ զինուորի ուղեկցութեամբ հետախուզել Չիթամաուզա քաղաքի շրջակայքն, ուր մօտ 200 հոգի խունխուզներից բաղկացած մի խումբ պատրաստութիւն էր տեսնում յարձակուելու և ջարդելու չինական արևելեան երկաթուղու Մոնղոլսկայա կայարանը։ Բաղդասարեանն ամենայն ճարպիկութեամբ կատարելով իւր ստանձնած դժուարին և վտանգաւոր գործը՝ իսկոյն հեռագրով տեղեկացնում է Խարբին, որտեղից ուղարկւում են Արևելեան Սիբիրի 17 րդ գնդի 72 զինուոր պորուչիկ Պոպովի հրամանատարութեամբ։ Նրանք Բաղդասարեանի ուղեկցութեամբ ապրիլ 24-ի լոյս 25-ի գիշերը հասնում են այն տեղ, ուր խունխուզները համախմբուած հանգստանալիս են եղել, և վրայ են տալիս։ Խունխուզներն անակընկալ յարձակումից սաստիկ շփոթուած, հազիւ կարողանալով զէնքերի մի մասը թաղել, մնացածը թողնում և ցիր ու ցան են լինում։ Խունխուզների ցրուելուց յետոյ մնացել էր 38 հատ Մաուզերի հրացան, 3 փուզի, 2 թընդանօթ, 244 բահ և 13 քլունգ, որոնք Բաղդասարեանը Խարբին հասցնելով յանձնել էր վերոյիշեալ Արևել. Սիբիրի 17 րդ գնդի պահեստը, բացի դրանից բռնել էին նաև երկու խունխուզ։

Չինական-արևելեան երկաթուղու շինութիւնը, յաջողութեամբ առաջ գնալով, շուտով վերջանալու վրայ է, բացի Մեծ Խինգանի ներքնուղուց, որտեղ տակաւին բաւականին գործ կայ։ Ծառայողների թիւը սակաւ առ սակաւ կըրճատւում է։ Մնացողներն ևս զգալով իրենց մօտալուտ արձակումն պաշտօնից, չաալութիւնը թողած սկսել են խնայողութեամբ ապրել, որպէս զի տուն վերադառնալիս գոնէ մի քանի կոպէկ ունենան գրպաններում։ Այլևս առաջուայ ուրախութիւնը, կեր ու խումը չի նըկատւում։ Ռեստորականները խիստ դըժգոհ են այդ բանից՝ նրանց հարցին, թէ ինչի՞ էք այդպէս փոխուել, ծառայողները խոր հոգոց հանելով պատասխանում են. «Է՞հ, եղբայր, շուտով մեր ծառայութեանն էլ վերջ կըտրուի։ Իսկ չէ՞ որ Մանջուրիա այլ ևս չենք գտնիլ։ Կըգընանք Ռուսիա և Աստուած տայ, որ 25—30 ր. ամսականով որևէ պաշտօն ճարենք, իսկ այստեղի հարիւրներն այլևս չենք տեսնիլ»։

Կ. Հունուտցեան

ՊՏՈՅՏՆԵՐ ՀՌԵՆՈՍԻ ՀՈՎՏՈՒՄ

I.

Ինչ ժողովուրդ ուզում էք վերցրէք, ինչ երկիր ուզում էք յիշատակեցէք, դուք կըտեսնէք, որ իւրաքանչիւր երկիր իւր հարազատ ժողովրդով մի առանձին գեղեցկութիւն է տալիս, մի առանձին սէր է տածում դէպի իւր աշխարհագրական անուններից մէկն ու մէկը, իւր լեռներից կամ գետերից այս կամ այն։ Ազգային և հայրենիքի հոգեբանութեանով բացատրել կարելի է միայն այս հանգամանքը, որովհետև իւրաքանչիւր ազգ, երկիր իւր իդէալները, իւր ուրախութիւնն ու վիշտը, իւր անցեալն ու ներկան առաւել չափով մարմնացնում է այդ վայրերի մէջ։

Ինչ նշանակութիւն որ ունի հայ ժողովրդի համար Արաքսը, ինչ նշանակութիւն Վոլգան ռուս ժողովրդի համար,—նոյնպիսի նշանակութիւն ունի և Հռենոսը գերմանացիների համար։

Մեր պանդուխտ բանաստեղծ երգեց հայութեան սիրելի «Մայր Արաքսը» նրա մէջ որոնելով հին-հին դարուց յիշատակներ, դրա հետ նաև նրա արդի վիճակը վառ գոյներով նկարագրեց. այդ իրեն իսկապէս բանաստեղծի անձի երգը չէ, այլ ամբողջ հայութեան. երգիչը միայն տաղանդաւոր արտայայտիչ է հանդիսանում միլիօնաւոր եղբայրների զգացումների։ Հայ ժողովուրդը յանձին իւր հարազատ որդի-բանաստեղծի մայր Արաքսի ալիքների մէջ հին-հին դարուց յիշատակներ է որոնում, ներկայ վիճակի ողբեր շարահիւսում։ Ռուս ժողովուրդը մի առանձին սիրով է երգում իւր Матушка-Վոլգային նուիրած երգերը, իսկ գերմանացին իւր Հռենոսի անուան հետ կապուած երգերը, միշտ ուրախ, երգում ցնծագին։

Արաքսն իւր ամբողջ ընթացքով իւր մայր հողով է անցնում, իւր ծնունդից մինչև մահը հարազատ զաւակ մնալով իւր կեանք և սնունդ տուող մօրը, նոյնը ռուս ժողովրդի Վոլգան։ Հռենոսի վիճակը մի փոքր տարբեր է։ Սա ծնւում է Զուիցերիայում, այրական հասակն անց է կացնում Գերմանիայում, իւր ծերութեան շրջանում իւր մահը Հոլլանդիայումն է գտնում։ Բայց այստեղ էլ վիճակը խիստ տարբեր չի։ Ճշմարիտ է. Հռենոսն անցնում է երեք զանազան երկրների միջով, բայց այդ երեք երկրների ժողովրդներն էլ միևնոյն գերման ցեղին են պատկանում, նոյն ծագումից են։ Այսպէս, այստեղ էլ բնութեան անօրէնութիւնն սքանչելի է։

Առաջին վայրկեանին, երբ ընդարձակ Հռենոսը տեսողութեանս առջև երևեցաւ, մտքիս մէջ իսկոյն կենդանի կերպով պատկերացաւ մեր «մայր» Արաքսը, յիշեցնելով ինձ իւր անուան հետ կապուած երգեր ու տաղեր, պատմական ու աշխարհագրական անուններ, ուրախ և տըխուր դէպքեր։ Արաքսը դեռ ծովը չհասած սգաւոր է այնպէս, ինչպէս նրան լեզու տուող երգիչը. իսկ առջևս տարածուող ծովանման Հռենոսը լալ չգիտէ. սա թէ իւր զաւակներին և թէ օտարներին մխիթարիչ բաներ ունի պատմելու, անցեալի փառաւոր—սակաւ անգամ վրդովուած—յուշերը կըպատմէ նա ձեզ, իւր ներկայի պանծալի վիճակի նկարագրութիւնը կանէ։ Եւ ինչո՞ւ ուրեմն գերմանացի ուսանողը սիրով չերգէ Հռենոսին նուիրած ուսանողական երգերը. նա, երգելով թէ իւր պապերը հեռու անցեալում նստած Հռենոսի ափերում էին և միշտ «մէկ էլ» գարեջուր վայելում, այդ պապերի և Հռենոսի յիշատակը յարգելու համար կանչում է «մէկ էլ ձգենք»—և այդ «մէկ»-ին վերջ չի լինում...

Հռենոսը Եւրոպայի ամենամեծ գետերից մէկն է. երկարութիւնն է 1295 կիլոմետր։ Հռենոսի ամենաբարձր աղբիւրը բղխում է 2344 մետր բարձրութիւնից (ծովի մակերևոյթից)։ Բազէլի մօտ Հռենոսը գտնւում է 248 մետր բարձրութեան վրայ, Մայնցի մօտ՝ 81, Քէօլնի մօտ՝ 36, Հոլլանդիայի սահմանում՝ 8, 5 մետր։ Նրա լայնութիւնն էլ տարբեր է. Բազէլի մօտ՝ 200 մետր, Մայնցի մօտ 576, իսկ Դիւսսելդորֆի մօտ ունեցած խորութիւնն էլ ամենամեծն է—15,7 մետր։ Հռենոսը խիստ հարուստ է ձկներով։

Հռենոսի տուած ամենամեծ օգուտը նրա նաւագնացութիւնից է. այդ է նրա ամենամեծ նշանակութիւնը։ Հռենոսը Բազէլի մօտից սկսած արդէն նաւարկելի է, բայց միայն փոքր նաւերի համար. իսկ մեծ նաւերի համար Ձպայերից սկսած արդէն նաւարկելի է։

Պատերազմների ժամանակ Հռենոսը մեծ դժուարութիւն է առաջացրել զօրքերի առաջ, թէև նոր ժամանակներում հոյակապ կամուրջների շնորհիւ մասամբ վերացուել են այդ դժուարութիւնները։ ժամանակ Հռենոսի վրայ չինել տուաւ ցցակամուրջ։ Նրեսնամեայ պատերազմների ժամանակ էլ նաւակներով էին անցնում գետը։

Գերմանիայի ոչ մէկ գետով այնքան չեն ճանապարհորդում, որքան Հռենոսի վրայով. ընդհանրապէս Հռենոսի հովիտն իւր շրջակայքով Գերմանիայի ամենաեռուն մասերից մէկն է. ամառ ժամանակ երթևեկութիւնը խիստ մեծ է։ Օտարերկրացիներ, մանաւանդ անգլիացիներ և ֆրանսիացիներ մեծ թուով ճանապարհորդում են Հռենոսի վրայով։ Ծովի վրայ էլ իւր զօրութիւնը հեռահետ մեծացնող Գերմանիան հիանալի նաւեր է պատրաստել Հռենոսի համար. այս նաւերից «Borussia»-ն և "Kaiserin Auguste Viktoria»-ն Եւրոպայի ամենամեծ, ամենաարագընթաց և ամենագեղեցիկ գետանաւերն են։

Հիանալի է այս ժամանակ Հռենոսը, ափերին բարձրացող կանաչ լեռներով, պտղատու ծառերի և խաղողի այգիներով։ Այստեղ մարդ իրեն Կովկասում է զգում, նրա փարթամ բուսականութիւնը յիշում։ Գերմանիայում, որտեղ ընդհանրապէս գինին քիչ գործածական է, Հռենոսի գինին յայտնի է։

Հռովմայեցիներն արդէն, Հռենոսին տիրելուց յետոյ, փորձեցին Հռենոսի նաւարկութիւնը կանոնաւորել։ Նաւարկութեան համար վտանգաւոր են յատկապէս ջրվէժները, Հռենոսեան ջրվէժներ կոչուած, որոնք թուով չորս հատ են։ Բացի դրանից նաւարկութիւնը վըտանգաւոր է Բինգենի կըճում, որտեղ Հռենոսն և իրեն մէջ պարփակող լեռներն այնքան մօտենում են իրար, որ գետի մէջ նրանք միանում են։ Կարլոս Մեծը միայն ամենափոքր նաւերն էր թոյլ տալիս այդտեղ անցնել, բայց հետզհետէ նաև մեծ նաւեր անցնել ըսկսան. վտանգաւոր է միայն ջրի սակաւութեան ժամանակ։

Ար. Աբեղեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՈՒՐՔԻԱ

Սուլթանի գահակալութեան հանդէսներից առաջ թուրք ոստիկանութիւնը Կ. Պոլսում բանտարկել է 45 հոգի, որոնցից 30-ը հայ են։

—«Köln. Zeit.»-ին աջողուել է ձեռք բերել քաղաքական մի ծրագրի պատճէնը, որ 1898 թուին մշակել և ստորագրել են արնաւուտների ութ պարագլուխներ և բուլղար մակեդոնական կոմիտէի ութ ղեկավարներ։ Այդ ծրագրի համաձայն, Թիւրքիայի արևմտեան-եւրոպական գաւառները պէտք է բաժանուեն երկու մեծ ինքնավար գաւառների Ալբանիա և Մակեդոնիա ընդհանուր անուններ տակ։ Առաջինի գլխաւոր քաղաքը պիտի լինի Էլբասանը, երկրորդինը—Սելանիկը։ Երկու գաւառներն էլ պէտք է կառավարուեն ջոկ-ջոկ ընդհանուր-նահանգապետների ձեռքով, որոնց նշանակում է սուլթանը, պետութիւնների հաւանութեամբ, հինգ տարի ժամանակով։ Եթէ անկարելի լինի Մակեդոնիայի համար յարմարաւոր ընդհանուր նահանգապետ ընտրել, այդ պաշտօնը պէտք է առաջարկուի Բատտենբերգի պրինց Ֆրանց-Յօզիֆին։ Ինչ վերաբերում է վարչութեան առանձին մասերին, այդ մասերը պիտի կազմակերպուեն Արևելեան Ռումելիայում գոյութիւն ունեցող նախկին վարչական մասերի նման։ Այս ծրագրի մասին Սոֆիայի Թուրքաց հիւպատոսն շտապել է յայտնել ի գիտութիւն սուլթանի և վերջինս իսկոյն Ալբանիա է ուղարկել իւր երկու թիկնապահներին։ Կէօլնի լրագիրն ոչինչ չի հաղորդում այս գործի յետագայ ընթացքի մասին, բայց նա աւելա-

—Թուրք-ֆրանսական միջադէպից յետոյ ծագել է մի նման միջադէպ Թիւրքիայի և Գերմանիայի միջև։ «Berl. Tag.»-ի Կ. Պոլսի թղթակիցն այդ մասին հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում։ Գերմանահպատակ ինժեներ Ֆրանկ Մուրզուանում մի քանի տարի առաջ մի հողաբաժին էր ձեռք բերել և հանքագործարան էր շինել այդ հողաբաժնում գտնուած քարածուխի հանքերը շահագործելու համար, գործի վրայ բաւական մեծ գումարներ ծախսելով: Երբ Թուրք իշխանութիւնը տեսաւ, որ ինժեներ Ֆրակն աջողութիւն է ունենալու, սկսեց ամեն տեսակ դժուարութիւններ յարուցանել Նրա դէմ, և Նրան կանչեցին Կ. Պոլիս. Այնտեղ սկսեցին անվաւեր համարել Նրա ունեցած դոկումենտները և ասացին, թէ յիշեալ հողաբաժինները Նրանից առաջ իբր թէ ծախուած է եղել սուլթանի փեսայ և գաշի Օսման փաշայի որդի Նուրէդդին-փաշայի վրայ։ Վերջինս արգելք էր դրել գերմանական ինժեների կալուածքի վերայ և դադարեցնել էր տուել գործարանի աշխատանքները։ Ֆրանկն իւր վնասները հաշւում է 100,000 մարկ և դիմել է գերմանական արտաքին գործերի մինիստրութեանը, խնդրելով որ վերջինս պաշտպանէ իւր շահերը։ «Berl. Tag.»-ը յոյս է յայտնում, որ «Կ. Պոլսի գերմանական դեսպան Ֆոն-Մարշալը կըգործի նոյնպիսի եռանդով, ինչպէս գործեց իւր ֆրանսիացի պաշտօնակից պ. Կոնստանը, իւր հայրենակիցների շահերը պաշտպանելու համար»։

—

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

«Standard»-ի Բրիւսէլի թղթակիցը հաղորդում է, թէ նախագահ Կրիւգերը Ցալկ Բուրգերից մի հեռագիր է ստացել, որով վերջինս հաղորդում է, թէ բուրերին օգնելու համար զէնք առած աֆրիկանդերների թիւն այժմ արդէն հասնում է 12,000 ի։

—Ամերիկայում կազմուած է 52 հոգուց բաղկացած կամաւորների մի զօրախումբ, որը շուտով պիտի ճանապարհուի Հարաւային Աֆրիկա բուէրների օգտին անգլիացիների դէմ կռուելու համար։ Պատերազմի վայրը մեկնելուց առաջ զօրախումբը կըգնայ Ֆրանսիա միանալու համար այնտեղ կազմակերպուած նոյնպիսի մի կամաւոր զօրախմբի հետ, որ բաղկացած է 100 ֆրանսիացուց:

— Յօվհաննէսբուրգի նախկին բերդապահ դր. Կրաուզէ, որն ապրում էր Լոնդոնում, ձերբակալուած է պետական դաւաճանութեան մեղադրանքով։ Յօվհաննէսբուրգը լորդ Ռոբերտսին յանձնելուց յետոյ Կրաուզէն երդւում էր տուել հաւատարիմ մնալու Վիկտորիա թագուհուն և, հեռանալով Աֆրիկայից, բնակութիւն էր հաստատել Լոնդոնում։ Երբ Նրան յայտնեցին, թէ մեղադրւում է լրտեսութեան և դաւաճանութեան համար, նա բացականչեց. «Ինչ յիմարութիւն»: Դատաւորը հրաժարուեց Նրան ազատ արձակել դրամական գրաւականով:

—«Ռէյտերի գործ.»-ը հաղորդում է Կապշտադից, թէ այնտեղ վճռուած է պատերազմական գործողութիւնները շարունակող բոլոր բուէրների ընտանիքներն աղարկել ծովափը, որտեղ Նրանց համար բանակներ կըշինուեն։ Այդ միջոցը ձեռք է առնւում Նրա համար, որ յիշեալ ընտանիքներին կենսական մթերքներ մատակարարելն աւելի հեշտ է ծովափում, քան թէ երկրի խորքում:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 28 ին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան Օգոստափառ Զաւակների հետ մեկնեցին Դանիայից Թագաւոր Կայսրը «Շտանդարտ» զբօսանաւով—Դանցիգ, իսկ Թագուհի Կայսրուհին Օգոստափառ Զաւակների հետ «Պոլեարնայա Զվեզդա» զբօսանաւով—Քիլ։

—Օգոստոսի 28-ին, առ. ժամը 10-ին Վիլհելմ կայսրը «Հոհենցոլերն» զբօսանաւով Նէյֆարվասսերից մեկնեց ծովը Թագաւոր Կայսրին դիմաւորելու համար։

—Գերմանական լրագրներն ամենաբարեկամական խօսքերով քննում են Դանցիգում լինելիք տեսակցութիւնը։ «Berl. Neueste Nach.»-ը ռուսաց Ցարին ողջունում է իբրև հարևան հզօր կայսրութեան մի Պետի, որը խօսքով և գործով ցոյց է տուել Իրեն իբրև խաղաղ կառավարող։ «Ցարը և Վիլհելմ կայսրը,—ասում է լրագիրը,—երկու Պետ են, որոնք հաւասարապէս ձգտում են խաղաղութեան պահպանման բարձր Նպատակներին։ Ցանձին գրաֆ Լամզդորֆի ռուսաց Կայսրն ունի մի անկեղծ և անձնուէր գործօն Իւր մտադրութիւններն իրագործելու համար: Գրաֆ Լամզդորֆը մինիստր Նշանակուեց լուրջ որոշումների րոպէին և նա ցոյց տուեց, որ արժանի է Կայսերական վստահութեան»։ — «Börsen Courier»-ը գրում է. «Պէտք է վստահ լինել, որ Պետերի և մինիստրների միջև Դանցիգում լինելիք մտքերի փոխանակութիւն արդիւնաւէտ միայն կարող է լինել Գերմանիայի և Ռուսիայի շահերի համաշխարհային խաղաղութեան համար»: «Vos. Zeit.»-ն ասում է. «Այսօր բարի համաձայնութիւն կըհաստատուի և կամրապնդուի Ռուսաց կայսրութեան և Գերմանիայի միջև»։

—Օգոստոսի 30-ին, առ. ժամը 9 ին Բուֆֆալօյում հրատարակուած է հետևեալ բիւլլետենը. «Մակ-Կինլէյի վիճակի մէջ վճռական բարելաւում է սկսուել երեկ երեկոյեան վէրքը բանալուց յետոյ Հիւանդը կարօղանում է ընդունել մսաջուր: Նրա վիճակն այսօր խիստ լաւ է։ Զարկերակը—116, տաքութեան աստիճանը—100,2»։

—Ինչպէս լսել է «New-York-Herald»-ի թղթակիցը, Բուֆֆալօյում Չոլգոսը խոստովանում է, թէ իւր կատարած սպանութեան փորձը հետևանք է եղել մի դաւադրութեան, որին մասնակցում էին շատ անձեր։

—Օգոստոսի 30-ին, Լուբէի նախագահութեամբ, Ելիսեան պալատում տեղի ունեցաւ մինիստրների խորհուրդ, որն զբաղւում էր ռուսաց Կայսրի ընդունելութեան վերջնական պատրաստութիւնների մանրամասնութիւններով:

—Ֆրանսիայում գտնուած Թուրք գաղտնի ոստիկանութեան գլխաւորները Ֆեբիդուն-բէյ և Լիպապիդան արտաքսուած են Ֆրանսիայից:

—Պարիզի Թուրք դեսպան Մինիրբէյն օգոստոսի 30-ին վերադարձաւ Պարիզ

—Մատիեսֆոնտայնից հեռագրում են. «Մայոր Կաւանս օգոստոսի 28 ին կռիւ ունեցաւ Տերոնի հետ Մոսելի հիւսիսային կողմը։ Թշնամին ցրուեց, կռուելու մի աննշան փորձ անգամ չանելով: Մի բուէր սպանուած է. շատ թուով լաւ ձիեր անգլիացիներն աւար վերցրին: Թշնամին անշուշտ ուզում էր յարձակում գործել Մոսելի վրայ, եթէ Նրան չխանգարէին։ Ընպերսը կանգնած է Լէդիսմիթի հարաւային կողմը։ Գնդապետ Կրաբբէ առաւօտեան ընդհարուեց Վանդերմերվէի հետ, որի ժամանակ վերջինս և դարձեալ մի բուէր սպանուեցին և 37 բուէր գերի բռնուեցին»։

—Կիտչեները հաղորդում է. «Օգոստոսի 28-ին Մետուէնը կռիւ ունեցաւ Վանկոնդեքի և Դելարէյի հրամանատարութեան տակ գտնուած թշնամու հետ: Օգոստոսի 24 ին և 26-ին Գրոտմարեանի մօտ նա դուրս քշեց զօրեղ դիրքից, թողնելով 6 հոգի սպանուած։ Մետուէնը գերի բռնեց 41 բուէր և տիրեց սայլերին ու պաշարներին»։

Խմբագիր հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

КАПИЛЛЕРИНЪ
НОВОЕ СОВЕРШЕННО БЕЗВРЕДНОЕ СРЕДСТВО ВОЗВРАЩАЕТЪ СѢДЫМЪ ВОЛОСАМЪ ИХЪ ПРЕЖНІЙ ЦВѢТЪ
ЦѢНА 2 РУБ.
А. СІУ и Ко.
(М.)№ 116818 26 26

ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԱԿԱՐ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆԻ
Չորրորդ տիպ
Գինն է 30 կոպ.
Գումարով գնչումն կըլինի։
Դիմել՝ Тифлисъ, Центральная книжная торговля կամ հեղինակին Эривань, Макару Теръ-Саркисянцъ, կամ Эривань, книжный магазинъ Петроса Ованнисянцъ.
—
Նոյն տեղերը և անձերին դիմել նաև Պետերբուրգում Նոր լոյս տեսած նոյն յօրինողի հետևեալ դասատետրի համար
Уроки чистописанія
ДЛЯ ДѢТЕЙ
(О.) 10 - 1



Ձառ լաւ թարմացնող
Պահպանում է ատամները փչանալուց։
Աշխարհիս մէջ ամենատարածուած ջուրը՝ բերանը ողողելու համար։
Անկասկած, աշխարհիս մէջ ցարդ գոյութիւն ունեցող կոսմետիքական միջոցներից սա ամենալաւն է բերանի համար
(M.) № 441 14 - 6

(М) 90582 52 41

! ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ !
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՈՍԿԵԲՈՐԱԿԻ ԾՈԹՐԻՆԻ
ՕՃԱՌ
ԴԵՂԱԳՈՐԾ
Գ. Փ. ԻՒՐԻԵՆՍԻ
—
Ոչնչացնում է մուները, արևից այրուածքը, դեղին բծերը, ելունդները, բշտիկները և պղծում է աւելորդ քրտնելու դէմ։ Բաշխարկւում է որպէս արդարացրիչ անուշահոտ բարձր որակութեան օճառ։
—
Մի կտորի գինը 50 կ., ½ կտորին 30կ.- Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում։
—
Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար Գ. Փ. Իւրգենսի մօտ, Մոսկուայում։
(M.) № 192764 24—18

Մամուլի տակից դուրս եկաւ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԻՆ ՈՒԽՏԻ
յարմարեցրած արքունի դպրոցների համար
Գինն 30 կոպ.
Դիմել կարելի է՝ Тифлисъ, Сѣвящ С. Саакянцъ կամ Тифлисъ, Центральная книжная торговля.
Սահ. քահ. Սահակեանց
(708) 5—1

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՕՆԻ
յատկապէս կազմած պետական դպրոցների համար (հոգևոր և մարմնաւոր դպրոցական իշխանութիւններից հաւանութիւն գտած)
1) Առաջին գրքոյկ, պատրաստական դասարանների համար, «Աղօթքներ եւ գլխաւոր տօների պատմութիւններ». գինն է 20 կոպ.։
2) Երկրորդ գրքոյկ, առաջին դասարանի համար. «Հին-Ուխտի պատմութիւն». գինն է 30 կոպ.։
Գրավաճառանոցներին եւ ուսումնարաններին հարկբերին 30% զիջողութիւն. դիմել Тифлисъ, Прот. Езнику Ерзинкянцу
(711) 3—3

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՅԻ
(INJECTION AU MATICO)

Գրիմօ և ընկ. դեղագործների թոյլ է տրուած Ռուսիայում։ Հեղուկի մէջ շահագործուած են պերուանեան Մատիկօ բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյից (սերմնաթափութիւն) և մի քանի տարուայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմաթափութիւնները։
Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(M) 200345 43—14

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՒՈՒԹԵԱՄԲ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку Пречещная, домъ Теръ-Ованесова)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշւապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ Կուրսերում աւանդւում են՝ 1) առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ. 2) հաշուապահութիւն՝ արդիւնաբերական գործարանական, առևտրական և բանկային 3) առևտրական թղթակցութիւն. 4) առևտրական անտեսագիտութիւն. 5) առևտրական մուրհակային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագծումն ձեռագրի)։
Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և «Եղբ. Ծովիանեան և Ընկ.» Բագուայ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը уставъ մանրամասն ծրագիր և արւում են և ուղարկւում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ Каспарову, Баку.
(678) 25—13

ԳՐԻԳՈՐԻՍ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑԻ
աշխատութիւնները վաճառւում են իւր մօտ հետևեալ գներով

Պատմութիւն Մանկավարժութեան	1 ր.—
Թուաբանական խնդիրներ, Ա. մաս (շուտով կըլինի VII տպագր.)	30 կ.
,, ,, Բ. ,, ,,	35 կ.
Բնախօսութիւն Ֆօսթէրի	30 կ.
Դասաւանդման խորհուրդներ	20 կ.

(709) 2—2

За успѣшныя занятія благодарности
Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.
Преподав. ведется по собств. сочиненіямъ
И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ
преподаетъ
Полный курсъ БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1) Бухгалтерія (двойная италіянска), 2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія, 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконеня и 5) Коммерческая корреспонденця.
Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательсто и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская № 71.
Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.
Занятія съ 1-го числа
(480) Годъ занятій одинадцатый 100—66

ТИПО-ЛИТОГРАФІЯ
„Пушкинская скоропечатня"
„Պուշկինեան արագատիպ" տպարան
(Նոր բացուած հայոց տպարան)
Ընդունւում են ամեն տեսակ և ամեն լեզուներով պատուէրներ։ Ունենք և մեծ քանակութեամբ հայերէն նոր ձևի տառեր, որոնցով տպւում են շատ գրքեր և ի միջի այլոց բժ. Բուզուղեանի բրօշիւրները։ Տպագրութեան մաքրութեան վրայ առանձին ուշադրութիւն է դարձնւում։ Գները չափաւոր և մատչելի են։ Պատուէրներն ընդունւում են հետևեալ հասցէով՝ С.-Петербургъ, Лештуковъ 4.
(705) Տպարանի կառավարիչ Ա. Դեղամեան 5—3

Дов. цензурою Тифлисъ, 1901 августа 21-го дня Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ № 387